միջնորդության քննության ընթացքում չի կարող քննարկման առարկա դարձվել, քանի որ Հայցվորը իր կողմից ներկայացված հայցում նշված փաստը որպես հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հանգամանք չի դիտարկել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հայցի մերժման ինքնուրույն և բացառիկ հիմք է, ուստի Դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը, ինչը բխում է նաև օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորումներից:

Դատարանի պատճառաբանությունն ու եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը և հայցը մերժվում է, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ, 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

ԱՁ Կարեն Սամվելի Բատիկյանի հայցն ընդդեմ ՀՀ Ապարանի համայնքապետարանի, երրորդ անձ՝ «Լեգիտիմուս» ՍՊ ընկերության՝ թիվ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-01/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2023թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված՝ «Լեգիտիմուս» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և նշված ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նոր գնահատում անցկացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2024թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**